



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ Ա Յ Ի Ն Ո Ր Ո Շ ՈՒ Մ

«ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 123-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 2.1-2.11-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ» ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐԺԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սահմանադրական դատարանը, քննության առնելով «ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի և 2.1-2.11-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժելու մասին առաջարկությունը, **Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. 2026 թվականի փետրվարի 11-ին Սահմանադրական դատարան է մուտքագրվել ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի (այսուհետ նաև՝ Դիմող) դիմումը՝ թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով «Սահմանադրական դատարան դիմելու և քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» 2026 թվականի փետրվարի 2-ի որոշումը: Հիշյալ որոշմամբ Դիմողը որոշել է.

«Թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով դիմել Սահմանադրական դատարան՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ և 2.1-ից 2-11-րդ մասերի՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ, 63-րդ և 75-րդ հոդվածներին համապատասխանությունը որոշելու հարցով:

Քաղաքացիական գործի վարույթը կասեցնել՝ մինչև Սահմանադրական դատարանի կողմից դիմումի կապակցությամբ վերջնական որոշում կայացնելը:

(...)»:

2. Դիմողը նշում է, որ թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործով Քնարիկ Սահակյանը հայց է ներկայացրել ընդդեմ Արմեն Արշակյանի, իրավասու մարմնի՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնի՝ երեխայի բնակության վայրն իր բնակության վայրում սահմանելու և ալիմենտի բռնագանձման պահանջների վերաբերյալ:

ՀՀ Լոռու մարզի առաջին աստանի ընդհանուր իրավասության դատարանի (դատավոր՝ Գ. Զաքարյան) վարույթում է գտնվում թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործն ըստ հայցի Արմեն Աղասու Արշակյանի ընդդեմ Քնարիկ Արմենի Սահակյանի, իրավասու մարմնին՝ Լոռու մարզի Վանաձոր համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ ամուսնալուծության և երեխայի բնակության վայրը հոր բնակության վայրում սահմանելու պահանջների մասին:

Երկու քաղաքացիական գործերով ներկայացված պահանջներից սույն քաղաքացիական գործով ներկայացված՝ երեխայի բնակության վայրը մոր բնակության վայրում սահմանելու և թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով ներկայացված՝ երեխայի բնակության վայրը հոր բնակության վայրում սահմանելու պահանջները միմյանց բացառող (հակընդդեմ) պահանջներ են, ինչն առաջացնում է երկու քաղաքացիական գործերը միացնելու անհրաժեշտություն: Այդ անհրաժեշտությունը, Դիմողի գնահատմամբ, պայմանավորված է այն հանգամանքով, որ երկու գործերի միաժամանակ քննությունը և միմյանցից անկախ լուծումը կարող են հանգեցնել երկու հակասական դատական ակտերի, քանի որ տեսականորեն հնարավոր է, որ սույն գործով երեխայի բնակության վայրը սահմանվի մոր մոտ, իսկ թիվ ԼԴ/1216/02/25 քաղաքացիական գործով՝ հոր մոտ: Արդյունքում երկու գործերի առանձին և միմյանցից անկախ քննության և լուծման արդյունքում առկա է միմյանց հակասող և մեկը մյուսին բացառող երկու վճիռների օրինական ուժի մեջ մտնելու վտանգ, ինչը կհակասի իրավական որոշակիության սկզբունքին և վերջնարդյունքում կխախտի կողմերի դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքը:

Վկայակոչելով Սահմանադրության 61, 63 և 75-րդ հոդվածները և Սահմանադրական դատարանի վերաբերելի դիրքորոշումները՝ Դիմողը պնդում է. «ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2.1-ից 2.11-րդ մասերը թույլ

են տալիս մեկ վարույթում միացնել տարբեր դատավորների վարույթում գտնվող գործերը՝ դատավորների փոխադարձ թույլտվություններով՝ միայն Հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ գործերի դեպքում: Մնացյալ մասով գործերը մեկ վարույթում միացնելու պայմանները նույնն են, դրանք կարող են միացվել մեկ վարույթում, եթե այդ գործերի միջև առկա է փոխադարձ կապ, դրանց համատեղ քննությունը կարող է ապահովել գործերի առավել արագ և արդյունավետ լուծումը, և միացման ենթակա բոլոր գործերով դեռևս չեն կայացվել ապացուցման պարտականությունը բաշխելու մասին որոշումներ: Այսինքն՝ այդ կերպ օրենսդիրն ընդունում է այն իրողությունը, որ նույնիսկ տարբեր դատավորների վարույթում գտնվող գործերով կարող են լինել այնպիսի դատավարական իրավիճակներ, որոնց դեպքում գործերն օբյեկտիվորեն անհրաժեշտ կլինի միացնել մեկ վարույթում: Սակայն այդ հնարավորությունը սահմանափակվում է միայն Հակակոռուպցիոն դատարանի տարբեր դատավորների վարույթում գտնվող գործերի մասով, իսկ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում գտնվող գործերի մասով օրենսդիրը այդ իրավահարաբերությունների կարգավորումը թողել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի տիրույթում՝ թույլատրելով միայն նույն դատավորի վարույթում գտնվող գործերի միացումը»:

Պատճառաբանելով, որ առաջացած դատավարական իրավիճակը հնարավոր չէ հաղթահարել նաև այլ դատավարական ինստիտուտների կիրառմամբ՝ Դիմողը եզրահանգում է, որ վիճարկվող իրավակարգավորումները խնդրահարույց են, քանի որ գործերը մեկ վարույթում միացնելու անհնարինության արդյունքում խախտվում են կամ առնվազն կարող են խախտվել գործին մասնակցող անձանց՝ Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները՝ հանգեցնելով նաև Սահմանադրության 75-րդ հոդվածի խախտման, քանի որ ստացվում է, որ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածով սահմանված վերոգրյալ ընթացակարգերն արդյունավետ չեն՝ գործին մասնակցող անձանց դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքների իրացման համար:

3. Ուսումնասիրելով ներկայացված դիմումը, դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով առկա է «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ նաև՝ Սահմանադրական օրենք) 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված՝ գործի քննությունը մերժելու հիմք, որպիսի պայմաններում սույն գործի քննությունը **ենթակա է մերժման՝ հետևյալ պատճառաբանությամբ.**

Սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասի իրավակարգավորումից բխում է, որ դատարանը դատական գործի վարույթը կասեցնելու դեպքում հիշատակված հոդվածով նախատեսված դիմումը կարող է ներկայացնել վարույթը կասեցնելու մասին որոշում ընդունելուց հետո՝ **եռօրյա ժամկետում:**

Սահմանադրական օրենքի 4-րդ գլխով սահմանվում են Սահմանադրական դատարան դիմելու ընդհանուր կանոնները, որոնք պարտադիր են Սահմանադրական դատարան դիմող **բոլոր սուբյեկտների**, այդ թվում՝ դատարանի համար: Նույն գլխով կանոնակարգվում են նաև գործի քննությունը մերժելու (Սահմանադրական օրենքի 29-րդ հոդված) հետ կապված հարցերը:

Օրենսդիրը Սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանել է, որ Սահմանադրական դատարանը գործի քննությունն ամբողջությամբ կամ մասամբ մերժելու մասին աշխատակարգային որոշում է ընդունում, **եթե դիմողն իրավասու չէ տվյալ հարցով դիմելու Սահմանադրական դատարան:**

Սահմանադրական դատարանը գտնում է, որ քննության առարկա դիմումը չի բավարարում Սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված պահանջը, մասնավորապես՝ Դիմողը թիվ ԼԴ/1214/02/25 քաղաքացիական գործի վարույթը կասեցրել է 2026 թվականի փետրվարի 2-ին կայացրած՝ «Սահմանադրական դատարան դիմելու և քաղաքացիական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշմամբ, մինչդեռ դիմումը փոստային ծառայությանն է հանձնվել նույն թվականի փետրվարի 9-ին (Սահմանադրական դատարան է մուտքագրվել սույն թվականի փետրվարի 11-ին): Նման պայմաններում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Դիմողը չի պահպանել Սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի 4-րդ

մասով սահմանված եռօրյա ժամկետը, հետևաբար՝ հիշյալ ժամկետից դուրս իրավասու չէ դիմելու Սահմանադրական դատարան:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով Սահմանադրության 169-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և 71-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերի պահանջները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց** .

«ՀՀ Լոռու մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 123-րդ հոդվածի 2-րդ մասի և 2.1–2.11-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի քննությունը մերժել:

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ**

3 մարտի 2026 թվականի
ՍԴԱՌ-30



Ա. ԴԻԼԱՆՅԱՆ